

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
I. ԱՄՓՈՓԱԳԻՐ	5
II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	5
III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	6
IV. ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	10
V. 2021 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	23
1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	23
2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	24
3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	25
4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	25
5. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ	25
6. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ	26
7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՊԵԿ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	26
8. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	27
9. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	27
10. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	27
11. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ	28
12. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՋՋԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ	28
13. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ	29
14. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	29

15. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ 30

16. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ
23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ 30

VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ31

VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ31

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ31

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 259-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը ներառյալ:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԵԿ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 259-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել Կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեին վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 102,513,119.7 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 110,204,953.25 հազ. դրամ, իսկ 2021թ. ինն ամիսների ճշտված պլանը՝ 101,283,094.75 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 98,850,511.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 98,457,324.6 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 98,422,593.0 հազ. դրամ:

ՀՀ ՊԵԿ 2021թ. ինն ամիսների բյուջեի ծախսերի կատարողականը ըստ միջոցառումների հետևյալն է.

հազ.դրամ

Ծրագիր Միջոցառում Հոդված	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ	Պլանի մնացորդ
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	101,283,094.75	98,850,511.22	98,457,324.57	98,422,593.03	97.21	2,432,583.53
1023 Հարկային և մաքսային ծառայություններ	21,829,467.00	19,420,781.87	19,153,908.74	19,113,062.13	87.74	2,408,685.13
11001 Հարկային և մաքսային ծառայություններ	14,440,980.50	13,452,542.02	13,186,091.59	13,828,075.22	91.31	988,438.48
Աշխատանքի վարձատրություն	11,078,815.00	11,078,815.00	10,814,892.28	11,302,251.11	97.62	-
Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր	3,362,165.50	2,373,727.02	2,371,199.31	2,525,824.11	70.53	988,438.48
11002 Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերում	2,429,280.00	2,429,280.00	2,429,280.00	1,002,650.87	100.00	-
11003 Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում	96,860.10	96,860.10	96,860.10	91,676.70	100.00	-
11004 Դրոշմապիտակների ձեռքբերում	2,835,000.00	2,835,000.00	2,835,000.00	3,529,863.29	100.00	-
11005 Փորձաքննությունների ծառայություններ	7,376.20	3,487.50	3,487.50	3,487.50	47.28	3,888.70
11006 ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	68,587.91	68,587.91	68,587.91	68,587.91	100.00	-
11007 Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	12,405.69	12,405.69	11,983.00	11,983.00	96.59	-
11009 Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից ՀՀ ՊԵԿ-ին հատկացվող կարճաժամկետ տեխնիկական աջակցություն	1,510.20	-	-	-	-	1,510.20
31001 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում	1,725,860.00	479,898.48	479,898.47	534,017.47	27.81	1,245,961.52
- Վարչական սարքավորումներ	140,927.90	99,140.63	99,140.63	153,259.63	70.35	41,787.27
- Այլ մեքենաներ և սարքավորումներ	614,990.00	330,757.85	330,757.84	330,757.84	53.78	284,232.15
- Ոչ նյութական հիմնական միջոցներ	969,942.10	50,000.00	50,000.00	50,000.00	5.15	919,942.10

31003	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում	16,768.90	13,871.26	13,871.26	13,871.26	82.72	2,897.64
	- Շենքերի և շինությունների շինարարություն	7,093.90	4,551.26	4,551.26	4,551.26	64.16	2,542.64
	- Նախագծահետազոտական ծախսեր	9,675.00	9,320.00	9,320.00	9,320.00	96.33	355.00
31004	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում	137,136.10	9,045.00	9,045.00	9,045.00	6.60	128,091.10
	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	127,808.30	-	-	-	-	127,808.30
	- Նախագծահետազոտական ծախսեր	9,327.80	9,045.00	9,045.00	9,045.00	96.97	282.80
31005	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմաններով ապահովում	21,457.20	19,803.91	19,803.91	19,803.91	92.29	1,653.29
	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	6,028.00	6,028.00	6,028.00	6,028.00	100.00	-
	- Հող	15,429.20	13,775.91	13,775.91	13,775.91	89.28	1,653.29
31006	"Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային աջակետի ծրագիր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նոր շենքային պայմանների ապահովում"	-	-	-	-	-	-
31007	"Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային աջակետի ծրագիր» վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նոր շենքային պայմանների ապահովում"	-	-	-	-	-	-
32001	Հաշվետվությունների ներկայացման համար բջջային տարբերակ	36,244.20	-	-	-	-	36,244.20
1015-12001	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	146,808.00	130,045.00	128,468.96	128,468.96	87.51	16,763.00
1102-12005	Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին	55,620,847.00	55,613,711.60	55,613,114.03	55,613,114.03	99.99	7,135.40

1205-12009	Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում	19,961,272.75	19,961,272.75	19,961,272.75	19,961,272.75	100.00	-
1224-11009	Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության տրամադրում	3,724,700.00	3,724,700.00	3,600,560.09	3,600,560.09	96.67	-
8984-11001	ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	-	-	-	6,115.07	-	-

IV. ՊԵՏԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2021 թվականի պետական բյուջեի եկամուտները նախատեսվել են 1,509,462.9 հազ. դրամ, իսկ ինն ամիսների համար ՀՀ կառավարության 2020 թվականի 30 դեկտեմբերի N 2215-Ն որոշմամբ հաստատված եռամսյակային համամասնություններով՝ 1,086,214.9 մլն. դրամ (կամ 72%):

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտների ծրագրային և 2019, 2020 թվականների ժամանակաշրջանների համադրելի փաստացի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2019թ.		2020թ.		2021թ.	
	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը	մլրդ դրամ	%-ը
Ընդամենը, որից՝	1,565.5	100.0 %	1,560.6	100.0%	1,509.5	100.0%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,464.3	93.5%	1,385.2	88.8%	1,440.1	95.4%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	0.8%	53.2	3.4%	24.3	1.6%
3. Այլ եկամուտներ	88.8	5.7%	122.2	7.8%	45.1	3.0%

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետի պահանջներով պայմանավորված՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները պետական բյուջեի ցուցանիշներում ներառելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները հաշվի առած՝ պետական բյուջեի եկամուտների տարեկան և ինն ամիսների ճշտված ծրագրային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1,624.3 մլրդ դրամ և 1,157.2 մլրդ դրամ:

2021 թվականի տարեկան և ինն ամիսների եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականի տվյալները հետևյալն են.

(Աղյուսակ 2)

մլրդ.դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Կատարման %-ն ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,509.5	1,624.3	1,086.2	1,157.2	1,201.5	74.0%	103.8%
այդ թվում՝							
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,440.1	1,548.3	1,035.0	1,099.1	1,137.3	73.5%	103.5%
Պաշտոնական դրամաշնորհներ	24.3	23.9	18.4	19.4	5.7	23.8%	29.3%
Այլ եկամուտներ	45.1	52.1	32.8	38.7	58.5	112.3%	151.4%

2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի փաստացի եկամուտները (1,201. 5 մլրդ. դրամ) կազմել են ինն ամիսների ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (1,157. 2 մլրդ.դրամ) 103.8%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (1,137. 3 մլրդ. դրամ) կազմել են ճշտված ծրագրային ցուցանիշի (1,099. 1 մլրդ. դրամ) 103. 5%-ը:

2020 թվականի ինն ամիսների համեմատ 2021 թվականի ինն ամիսների պետական բյուջեի եկամուտները աճել են 11.8%-ով կամ 126. 4 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 94.7%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 4.9%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2021 թվականի ինն ամիսներում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 1,137. 3 մլրդ. դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են ինն ամիսների ծրագրային ցուցանիշի 103.5%-ը:

2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերը աճել են 11.9%-ով կամ 120.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի, շահութահարկի, սոցիալական վճարի, ինչպես նաև այլ հարկերի գծով մուտքերի աճով:

ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների 2021թ. ինն ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 3)
մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2020թ.			2021թ.		
		Հունվար-սեպտեմբեր	տեսակ. կշիռը	Աճի տեմպը %	Հունվար-սեպտեմբեր	տեսակ. կշիռը	Աճի տեմպը %
1	2	3	4	5	6	7	8
1	ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք	1,016,761.4	100.0%	94.2	1,137,295.1	100.0%	111.9
1.1	ԱԱՀ, այդ թվում՝	335,134.6	33.0%	94.1	382,991.6	33.7%	114.3
1.1.1.	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	78,323.7	7.7%	111.0	94,897.5	8.3%	121.2
1.1.2	Մաքսային մարմինների կողմից հավաքագրված	120,642.0	11.9%	74.1	133,880.0	11.8%	111.0
1.2	Շահութահարկ	122,607.4	12.1%	82.5	131,530.6	11.6%	107.3
1.3	Եկամտային հարկ, ներառյալ եկամտահարկ և սոց. ապահ. վճարներ	310,478.7	30.5%	102.0	318,384.1	28.0%	102.7
1.4	Ակցիզային հարկ, այդ թվում՝	83,616.3	8.2%	101.7	76,027.7	6.7%	90.9
1.4.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	16,314.4	1.6%	149.0	11,310.8	1.0%	69.3
1.4.2	Մաքսային մարմինների կողմից հավաքագրված	23,107.9	2.3%	96.1	25,054.0	2.2%	108.4
1.5	Շրջանառության հարկ	19,795.4	1.9%	96.4	22,694.7	2.0%	114.6
1.6	Բնապահպանական հարկ և բնօգտագործման	40,955.8	4.0%	102.8	48,047.2	4.2%	117.3

	վճար, այդ թվում՝						
1.6.1	ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	769.5	0.1%	75.5	1,012.2	0.1%	131.5
1.6.2	Մաքսային մարմինների կողմից հավաքագրված	2,576.5	0.3%	23.4	1,674.1	0.1%	65.0
1.7	Մաքսատուրք, այդ թվում՝	46,872.3	4.6%	71.2	62,522.0	5.5%	133.4
1.7.1	ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված	46,494.3	4.6%	83.7	62,394.2	5.5%	134.2
1.8	Սոցիալական վճար	17,390.5	1.7%	125.6	31,652.0	2.8%	182.0
1.9	Այլ հարկային եկամուտներ	17,630.2	1.7%	115.9	33,075.4	2.9%	184.1
1.10	Պետական տուրք	22,587.8	2.2%	75.4	34,492.3	3.0%	152.7
1.11	Հարկերի անցումային գերավճար	-307.7	-	-	-4,122.5		

2021 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքն ըստ եկամտի տեսակների հետևյալն է.

- 33.7 %-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 383.0 մլրդ. դրամ, որից 228.8 մլրդ. դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 94.9 մլրդ. դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 154.2 մլրդ. դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացված արժեքի հարկի մուտքերը աճել են 14.3%-ով կամ շուրջ 47.9 մլրդ. դրամով:
- 28.0%-ը ապահովվել է եկամտային հարկի (այդ թվում՝ եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) հաշվին՝ կազմելով 318.4 մլրդ. դրամ, այն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.7 տոկոսով կամ 7.9 մլրդ. դրամով:
- 11.6 %-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 131.5 մլրդ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն աճել է 7.3 տոկոսով կամ 8.9 մլրդ. դրամով:

- 6.7 %-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 76.0 մլրդ դրամ, որից հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 39.7 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 36.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 9.1%-ով կամ 7.6 մլրդ դրամով, որը պայմանավորված է հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի 10.3%-ով (4.5 մլրդ դրամով) և ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի 7.8%-ով (3.1 մլրդ դրամով) նվազմամբ:
- 5.5 %-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 62.5 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն աճել է 33.4%-ով կամ շուրջ 15.6 մլրդ դրամով:

4.2 %-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 48.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 17.3%-ով կամ շուրջ 7.0 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի աճով, որոնք կազմել են 41.5 մլրդ դրամ՝ 21.7%-ով (7.4 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշը: Միաժամանակ՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մուտքերի գծով արձանագրվել է անկում՝ 24%-ով (691.4 մլն դրամով):

- 2.8 %-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին և կազմել է 31.7 մլրդ դրամ՝ 82.0%-ով կամ 14.3 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում դրույքաչափերի և համախառն եկամտի առավելագույն չափի բարձրացմամբ:
- 2.0 %-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 22.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շրջանառության հարկի մուտքերը աճել են 14.6%-ով կամ ավելի քան 2.9 մլն դրամով:

2.9 %-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 33.1 մլրդ դրամ, մասնավորապես՝ 21.5 մլրդ դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 5.5 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 2.8 մլրդ դրամ՝ ճանապարհային հարկը, 1.8 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 826.4 մլն դրամ՝ ԵՏՄ

անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 639.4 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 87.6%-ով կամ 15.5 մլրդ դրամով: Աճն արձանագրվել է հիմնականում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարների գծով, որոնք շուրջ 3.4 անգամ կամ 15.1 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականի հունվարի 1-ից օրենքում կատարված փոփոխությունների համաձայն դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ:

3.0 %-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին և կազմել է 34.5 մլրդ դրամ՝ կազմելով հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշի 95.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու պետական գրանցման համար սահմանված պետական տուրքերի կատարողականով: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ պետական տուրքի գծով մուտքերն աճել են 52.7%-ով կամ 11.9 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու, օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի աճով:

Առանձին պետական տուրքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

(Աղյուսակ 4)

մլրդ. դրամ

	2020թ. ինն ամիսների փաստ	2021թ. ինն ամիսների ճշտված պլան	2021թ. ինն ամիսների փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. ինն ամիսները 2020թ. ինն ամիսների նկատմամբ (%)
Պետական տուրքեր, այդ թվում՝	22.59	36.21	34.49	95.2%	152.7%
Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների	1.43	1.55	1.75	112.9%	122.8%

համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար					
Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար	1.34	1.38	2.43	176.6%	181.7%
Պետական գրանցման համար	3.32	4.51	3.72	82.6%	112.2%
Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար	0.92	1.78	1.64	92.2%	178.4%
Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար	7.47	12.62	13.52	107.2%	181.1%
Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար	7.85	13.95	11.12	79.7%	141.7%
Այլ պետական տուրքեր	0.27	0.43	0.33	77.8%	124.3%

Հաշվետու ժամանակահատվածում դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել շուրջ 1.8 մլրդ դրամ, որից 111.5 մլն դրամը կազմել են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները, որոնք 40.9%-ով կամ 77.1 մլն դրամով զիջել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2021 թվականի ինն ամիսներին ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանքների տրամադրման համար պետական բյուջե է մուտքագրվել 35.6 մլն դրամ՝ նախատեսված 6.2 մլն դրամի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3.1 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքերի 10.8%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների համար՝ կազմելով 3.7 մլրդ դրամ: Կանխատեսված ցուցանիշի համեմատ մուտքերի զիջումը հիմնականում պայմանավորված է ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ և ժամանակավոր համարանիշի) տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական

համարանիշը վերականգնելու, լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու և ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման վկայագիր տալու համար բյուջե մուտքագրված տուրքերի կատարողականով, որոնք կազմել են համապատասխանաբար 1.4 մլրդ դրամ, 466.9 մլն դրամ և 719.8 մլն դրամ՝ 21.5%-ով (386.9 մլն դրամով), 43.4%-ով (358.1 մլն դրամով) և 20%-ով (180.2 մլն դրամով) զիջելով կանխատեսված ցուցանիշները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 39.2%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար: Կանխատեսված ցուցանիշի և նախորդ տարվա ինն ամիսների փաստացի մուտքերի գերազանցումը հիմնականում պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով 2021 թվականի սեպտեմբերի 9-ից պղնձի և մոլիբդենի խտահանքեր արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքերի սահմանմամբ, որոնց գծով հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 6 մլրդ դրամ: Իննամսյա կանխատեսված ցուցանիշի գերազանցումը մասամբ էլ պայմանավորված է վիճակախաղերի, շահումներով խաղերի ու մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի և խաղերի բնագավառում լիցենզիաներ տալու համար գանձվող տուրքերի կատարողականով, որոնք կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ և 15.1%-ով գերազանցվել կանխատեսված ցուցանիշը:

2021 թվականի ինն ամիսներին պետական տուրքերի 32.2%-ը բյուջե է վճարվել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների դիմաց՝ կազմելով 11.1 մլրդ դրամ: Կանխատեսված ցուցանիշի համեմատ մուտքերի ցածր մակարդակը պայմանավորված է տվյալ խմբում 62.6% տեսակարար կշիռ ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերով, որոնք կազմել են 7 մլրդ դրամ՝ 24.9%-ով (2.3 մլրդ դրամով) զիջելով իննամսյա կանխատեսված ցուցանիշը: Բացի այդ, օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար գանձված տուրքերը նույնպես զիջել են իննամսյա կանխատեսված ցուցանիշը՝ 29.6%-ով (890.2 մլն դրամով), որոնց գծով մուտքերը կազմել են 2.1 մլրդ դրամ:

- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից միասնական հաշիվ փոխանցված գումարը կազմել է 4,122.5 մլն դրամ՝ նախորդ տարվա 307.7 մլն դրամի դիմաց:

Համաձայն ՀՀ ՊԵԿ կողմից հրապարակված հաշվետվությունների, ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների համաձայն 2021թ. ինն ամիսների և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների, ինչպես նաև ակցիզային հարկի և շահաբաժիններից վճարված եկամտային հարկի փոխհատուցման ենթակա գումարների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 5)

մլն.դրամ

Հ/Հ	Ցուցանիշ	2020թ.	2021թ.	
		Հունվար-սեպտեմբեր	Հունվար-սեպտեմբեր	Աճի տեմպ %
1	2	3	4	5
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	56,043.0	47,356.5	84.5
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	31,947.1	46,525.9	145.6

3	2021 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների մասով՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող օրվա դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար	-	14,786.6	-
4	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	174.9	276.5	158.1
5	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	9,330.0	15,890.0	170.3
6	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	394.4	402.0	101.9
7	Շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եզրակացություններով փոխհատուցման ենթակա գումար	855.7	2,058.5	240.6
8	ՀՀ Կառավարության 28.09.2017թ. թիվ 1208-Ն և ՀՀ Կառավարության 24.08.2017թ. թիվ 1048-Ն որոշումների համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եզրակացություններով փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումար	180.2	310.5	172.3
	ԸՆԴԱՄԵՆԸ	98,925.3	127,606.6	129.0

2021թ. ինն ամիսներում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 47,356.5 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից պակաս է 15.5 տոկոսով, իսկ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի է 45.6 տոկոսով: ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի է կազմել 58.1 տոկոսով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 70.3 տոկոսով:

Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության կապիտալում ներդնելու դեպքում այդ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարների գծով պետական բյուջեից կատարված փոխհատուցումները նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 140.6 տոկոսով՝ կազմելով 2,058. 5 մլն դրամ:

Ակցիզային հարկի մասով հարկատուներին պետական բյուջեից կատարված փոխհատուցումները նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել են 1.9 տոկոսով կամ 7. 6 մլն դրամով՝ կազմելով 402. 0 մլն դրամ:

2021 թվականի ինն ամիսներում ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների մասով ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

Բյուջե մուտքերն ըստ եկամտային հաշիվների.

(Աղյուսակ 6)
հազ. դրամ

Ժամանակա հատված	Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր	Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր	Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ	Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ
Ընդամեն	970,849,082	69,012,951	229,760,215	1,269,622,247
Հունվար	117,975,601	4,452,298	16,204,081	138,631,980
Փետրվար	70,386,822	5,668,554	23,116,881	99,172,257
Մարտ	98,961,574	6,624,676	27,381,422	132,967,672
Ապրիլ	163,498,134	6,979,223	25,684,048	196,161,404
Մայիս	86,399,920	7,091,479	26,762,210	120,253,608
Հունիս	112,736,801	6,513,971	27,885,579	147,136,350
Հուլիս	104,075,451	9,014,815	27,838,131	140,928,396
Օգոստոս	96,174,925	7,400,949	26,543,050	130,118,924
Սեպտեմբեր	120,639,855	15,266,987	28,344,814	164,251,656

*Հարկերի միասնական հաշվի մուտքերում հաշվի են առնվել վերահաշվարկները և ճշտումները

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները.

(Աղյուսակ 6. 1)
հազ. դրամ

Ամիս	Անցումային գերավճարից վերադարձ միասնական հաշիվ	Դեբետային գերավճարից վերադարձ միասնական հաշիվ, այդ թվում՝ ՊԵԿ եզրակացությունների համաձայն վերադարձված	Վարկառուն երին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսներ	ԱԱՀ-ի վերադարձ (Tax free)	Այլ ելքեր	Ընդամենը հարկերից վերադարձների գումարը
Ընդամենը	4,122,463	109,226,615	15,870,213	276,491	2,831,407	132,327,189
Հունվար	0	7,267,660	626,053	11,874	221,758	8,127,344
Փետրվար	14,205	14,510,153	3,235,309	34,721	123,197	17,917,584
Մարտ	5,413	11,008,915	705,635	23,150	89,449	11,832,563
Ապրիլ	17,765	14,752,391	1,230,885	26,159	64,990	16,092,190
Մայիս	7,971	11,703,075	2,928,041	43,515	176,325	14,858,926
Հունիս	4,043,620	9,766,987	1,008,157	37,179	436,981	15,292,925
Հուլիս	28,964	17,540,824	861,762	64,548	168,651	18,664,750
Օգոստոս	2,791	13,248,088	4,336,909	8,365	1,112,767	18,708,920
Սեպտեմբեր	1,735	9,428,523	937,461	26,981	437,288	10,831,987

2021թ. 9 ամիսների արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 6. 2)
հազ. դրամ

Ամիս	Հարկային եկամուտներ և պետական տուրքերի գումարը
Հունվար	130,504,636
Փետրվար	81,254,673
Մարտ	121,135,109

Ապրիլ	180,069,214
Մայիս	105,394,682
Հունիս	131,843,425
Հուլիս	122,263,646
Օգոստոս	111,410,005
Սեպտեմբեր	153,419,669
Ընդամենը 2021թ. 9 ամիսներ	1,137,295,058

Վ. 2021 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵԿ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից ՊԵԿ կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 102,513,119.7 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 110,204,953. 25 հազ. դրամ, իսկ 2021թ. ինն ամիսների ճշտված պլանը՝ 101,283,094. 75 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 98,850,511. 2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 98,457,324.6 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 98. 422,593. 0 հազ. դրամ:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային ծառայություններ միջոցառման մասով 2021թ. տարեկան ծախսերի համար 2021թ. պետական բյուջեով նախատեսվել է 21,397,634. 4 հազ. դրամ գումար, իսկ տարեկան ճշտված ծրագրով՝ 21,096,554. 4 հազ.դրամ: 2021թ. ինն ամիսների պլանը սահմանվել է 14,551,310. 5 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 14,440,980. 5 հազ. դրամ, դրամարկղի ծախսը կազմել է 13,186,091. 6 հազ. դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 1,254,888. 9 հազ. դրամ:

Մասնավորապես՝ սույն միջոցառման շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 7)
հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2021թ. ինն ամիսների ճշտված պլան	Ֆինանսա վորում	Դրամարկղի ծախսը	Փաստացի ծախս	Կատար ման %- ը $6=4/2$ $\times 100\%$	Պլանի մնացորդ $7=2-4$
1	2	3	4	5	6	7
Ընդամենը	14,440,980.5	13,452,542.0	13,186,091.59	13,828,075.2	91.3	988,438.5
Աշխատանքի վարձատրություն	11,078,815.0	11,078,815.0	10,814,892.28	11,302,251.1	97.6	-
Ապրանքների, ծառայությունների	3,362,165.5	2,373,727.0	2,371,199.31	2,525,824.1	70.5	988,438.5

ի ձեռքբերում և այլ ծախսեր						
------------------------------	--	--	--	--	--	--

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 11,302,251.1 հազ. դրամ, դրամարկղի ծախսը՝ 10,814,892.3 հազ. դրամ, կատարողականը ճշտված ծրագրային ցուցանիշի նկատմամբ՝ 97.6 %, ինն ամիսների վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը՝ 488,640.1 հազ. դրամ:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականը կազմել է 70.5 %:

Շեղումը հիմնականում պայմանավորված է ապրանքների և ծառայությունների ձեռք բերման դիմաց որոշ գումարների և աշխատավարձի գծով 263.9 մլն. դրամի չափով եկամտային հարկի գումարի հոկտեմբեր ամսին վճարելու հանգամանքով:

2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերման միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 8)
հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2021թ. ինն ամիսների ճշտված պլան	Ֆինանսա վորում	Փաստ	Փաստացի ծախս
1	2	3	4	5
Ընդամենը	5,264,280.0	5,264,280.0	5,264,280.0	4,532,514.2
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	2,429,280.0	2,429,280.0	2,429,280.0	1,002,650.9
Դրոշմապիտակների ձեռքբերում	2,835,000.0	2,835,000.0	2,835,000.0	3,529,863.3

Նշված ծրագրերով կատարողականը կազմել է 100 տոկոս, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահեստավորված մնացորդները կազմել են համապատասխանաբար՝ 2,418,783.9 հազ. դրամ և 2,515,101.1 հազ. դրամ:

3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 100 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղի ծախսը կազմել է 96,860.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 91,676.7 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել է թվով 1515 հարկային և մաքսային ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ (թվով 31 դասընթաց 124 ուսումնական խմբերով): Վերապատրաստումները իրականացվել են պլանավորված դասընթացների և ուսումնական խմբերի քանակներին համապատասխան, սակայն մասնակիցների թվաքանակը նվազել է 450 ծառայողով՝ կազմելով 1065 մասնակից:

4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձաքննությունների ծառայությունների միջոցառումով 2021թ. ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 7,376.2 հազ. դրամ, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 3,487.5 հազ. դրամ: Պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը կազմել է 3,888.7 հազ. դրամ: Պլանավորված թվով 186 փորձաքննության համեմատ փաստացի կատարվել է 181 փորձաքննություն կամ նախատեսվածի 97.3 տոկոսը, սակայն փաստացի ծախսվել է նախատեսված միջոցների 47.3 տոկոսը:

5. ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ

ներկայացնելիս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումների գծով ծախսերը կազմել են 68,587. 9 հազ. դրամ, կատարողականը կազմել է 100 %:

6. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ միջոցառումով 2021թ. ինն ամիսների ճշտված պլանը կազմել է 12,405.7 հազ. դրամ, դրամարկդի և փաստացի ծախսերը՝ 11,983.0 հազ. դրամ: Պլանավորված և փաստացի ծախսված գումարների տարբերությունը կազմել է 422.7 հազ. դրամ, ինչը պայմանավորված է գործուղման հաշվետվությունը ուշ ներկայացնելու և վճարում հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում վճարելու հանգամանքով:

7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՊԵԿ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 17.06.2021թ. թիվ 988-Ն որոշմամբ, Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ նախատեսվել է անցկացնել ՊԵԿ աշխատակիցների ուսուցում և հաշվետվությունների ներկայացման բջջային հավելվածների մշակման միջոցառման ծրագրի առույտ, որի համար 2021թ. ինն ամիսների ճշտված պլանով ծրագրվել է 1,510. 2 հազ. դրամի միջոցներ: Միջոցառման շրջանակներում միջոցներ չեն ծախսվել, ինչը պայմանավորված է Զարգացման ֆրանսիական Գործակալության կողմից ծրագրի տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ դրական եզրակացությունը 2021 թվականի սեպտեմբերի 24-ին տալու և հետևաբար՝ գնման գործընթացի ուշ սկսելու հանգամանքով:

8. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառումով 2021թ. տարեկան և ինն ամիսների ճշտված պլանները կազմել են համապատասխանաբար 2,321,220. 0 հազ. դրամ և 1,725,860. 0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսավորման գումարը և դրամարկղի ծախսը կազմել են 479,898. 5 հազ. դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացների կազմակերպման՝ տեխնիկական բնութագրերի ուշացումով կազմման և առկա մնացորդներով պահանջարկի բավարարման հանգամանքներով:

9. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում միջոցառման շրջանակներում ծախսերի կատարողականը կազմել է 82.7 տոկոս: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 16,768.9 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 13,871. 3 հազ. դրամ: Շեղումը կազմել է 2,897. 6 հազ. դրամ, ինչը պայմանավորված է նրանով, որ կապիտալ վերանորոգման ծառայությունները ձեռք են բերվել ավելի մատչելի գներով, քան նախատեսված էր:

10. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմանների բարելավում միջոցառման հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 137,136. 1 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 9,045. 0 հազ. դրամ: Շեղումը կազմել է 128,091. 1 հազ. դրամ, ինչը պայմանավորված է նրանով, որ միջոցառման շրջանակներում ՊԵԿ Երևան քաղաքի Իսակովի 10 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերում

կատարվել են փոփոխություններ, որի արդյունքում աշխատանքները նախատեսվում են ավարտել չորրորդ եռամսյակում:

11. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային պայմաններով ապահովում միջոցառման հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 21,457.2 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը՝ 19,803.9 հազ. դրամ: Շեղումը կազմել է 1,653.3 հազ. դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ միջոցառման շրջանակներում նախատեսված ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի Չարենցի փողոցին հարակից տարածքի հողամասի ձեռք բերումը որոշվել է իրականացնել հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո:

12. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՋՋԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Միջոցառման իրականացումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 17.06.2021թ. թիվ 988-Ն որոշմամբ, որով նախատեսվել է հաշվետվությունների ներկայացման համար մշակել թվով երկու բջջային հավելվածներ:

Միջոցառման համար 2021թ. ինն ամիսների ճշտված պլանով նախատեսվել է 36,244.2 հազ. դրամ գումար: Հաշվի առնելով, որ միջոցառման շրջանակներում նախատեսված միջոցների հիմնական մասը տրամադրվում է Զարգացման Ֆրանսիական Գործակալության կողմից (առաջացող հարկային պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի հաշվին), իսկ ծրագրի տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ Գործակալության դրական եզրակացությունը տրվել է 2021 թվականի սեպտեմբերի 24-ին, գնման գործընթացի կազմակերպումը տեղափոխվել է հաջորդ հաշվետու ժամանակաշրջան:

13. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ

Կենշաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակներում կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին միջոցառման մասով 2021 թվականի տարեկան և ինն ամիսների ճշտված պլանները կազմել են համապատասխանաբար՝ 56,645,348.2 հազ. դրամ և 55,620,847.0 հազ. դրամ: Դրամարկդի և փաստացի ծախսերը կազմել են 55,613,114.0 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի պլանի և դրամարկդի ծախսի տարբերությունը կազմել է 7,733.0 հազ. դրամ: Մասնակիցների պլանային թվաքանակի (325,410 մարդ) համեմատ փաստացի ցուցանիշը՝ համաձայն ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման ամփոփած տվյալների՝ կազմել է 400,050 մարդ կամ 74,640-ով ավելի:

14. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանակներում ՊԵԿ աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար 2021թ. պետական բյուջեի տարեկան և ինն ամիսների ճշտված պլանները համապատասխանաբար կազմել են՝ 225,864.0 հազ. դրամ և 146,808.0 հազ. դրամ: 2021թ. ինն ամիսների դրամարկդի ծախսը կազմել է 128,469.0 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկդի ծախսի տարբերությունը կազմել է 18,339.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 87.5%-ը:

Շահառուների նախատեսված թվաքանակը կազմել է 3294, սակայն սոցիալական փաթեթից օգտվել են 2676 աշխատակից՝ նախատեսվածից 618 աշխատակցով պակաս, որը պայմանավորված է աշխատողների աշխատանքի ընդունման վեց ամիսը լրացած չլինելու և շահառուների ցանկում չընդգրկվելու, ինչպես նաև ոմանց կողմից դիմումներ չներկայացնելու հանգամանքներով:

15. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասով 2021թ. պետական բյուջեի ինն ամիսների ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 19,961,272.7 հազ. դրամ:

Վճարումները կատարվել են ՊԵԿ ՏՏ ստորաբաժանման կողմից տրամադրված՝ փաստացի վճարումների անհատականացված տվյալների հիման վրա:

16. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ (COVID-19) ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԶԵՂՈՔԱՑՄԱՆ 23-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում նախատեսվել է օժանդակել զբոսաշրջության ոլորտում գործունեություն իրականացնող շուրջ 1500 տնտեսվարողների, որի համար 2021թ. պետական բյուջեի տարեկան և ինն ամիսների ճշտված պլաններով նախատեսվել է 3,724,700.0 հազ. դրամ գումար: Սույն միջոցառման շրջանակներում փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 3,600,560.1 հազ. դրամ, ինչը պայմանավորվել է այն հանգամանքով, որ աջակցություն ստանալու նպատակով փաստացի դիմել է 1237 շահառու՝ 263-ով պակաս քան նախատեսվել էր:

VI. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

VII. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2021 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: